ՀԱՍՏՈՒՄ ԵՄ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
10 հուլիսի 2012թվական

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012Թ-Ի ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵՅԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն՝ Վ. Մկրտչյան

Հարգելի ավագանու անդամներ և հյուրեր, Ձեզ եմ ներկայացնում Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքում 2012թ. առաջին կիսամյակի բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդում, բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում կատարված աշխատանքների վերաբերյալ:
Իմ կողմից ապահովվել է գյուղապետարանի աշխատակազմի անխափան աշխատանքը:Աշխատակազմի քարտուղարի կողմից կատարվել է հետևյալ աշխատանքները՝
Համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, ավագանու անդամների ծանուցումը, նիստերի արձանագրումը և նիստի ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը:
Կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի և ավագանու անդամների մոտ:Ընդունելության եկած քաղաքացիներից 40 դիմումներին տրվել է սպառիչ պատասխան, դրանցից 2-ը եղել են անձնական բնույթի, 38-ը սոցիալական բնույթի:Ընդհանուր առմամբ, որպես սոցիալական օգնություն բնակչությանը տրվել է՝ 725,0 /յոթ հարյուր քսան հինգ հազար/ դրամ:

Ղեկավարվելով «ՏԻՄ» Հ.Հ. օրենքի պահանջներով իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված մի շարք պարտադիր լիազորություններ:Հաշվետու ժամանակաշրջանում վերահսկողություն է իրականացվել հողի և գույքահարկի հարկատեսակների հավաքագրման աշխատանքների նկատմամբ:
Հողի հարկը առաջին կիսամյակի կտրվածքով կազմում է 2250.0 հզ. դիմաց հավաքագրվել է՝ 489.3 հզ. դրամ:
Գույքահարկ շենք շինությունների գույքահարկը՝ 75.0 հզ. դիմաց հավաքագրվել է՝ 1.1 հզ. դրամ:
Փոխադրամիջոցների համար՝ 500.0հզ. դիմաց, հավաքագրվել 283.2հզ. դրամ:
Տեղական տուրքերի դիմաց՝ 35.0 հզ. դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 13.5հզ. դրամ:
Վարձակալական հողի հարկ՝ 150.0հզ. դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 29.9 հզ. դրամ:
1.Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններ:
2.Ֆինասների բնագավառում ավագանու հաստատմանն է ներկայացվել բյուջեի երկու փոփոխություն, որը փորձաքննության է ուղարկվել

Արդարադատության նախարարություն և մարզպետարան օրենքով սահմանված կարգով:
2.1Տրվել է ֆինանսական օգնություն, որպես ճանապարհածախս Արտակ Մարգարյանին ռազմական հմտությունների կատարելագործման, վերապատրաստման, վարժական հավաքներին մասնակցելու համար 20.0 /քսան հազար/ դրամ:
3.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝ կատարվել են հետևյալ աշխատանքները.
3.1Համայնքում աղբահանությունը անցել է բնականոն վիճակի, շաբաթական երկու անգամ, կնքված պայմանագրի հիման վրա էջմիածնի քաղաքապետարանի բնակ-կոմունալ վարչության հետ:
3.2 Համայնքում գործող գերեզմանատան աշխատանքները իմ կողմից վերահսկվում են:
3.3Իմ կողմից տրվել է երկու շինարարության թույլտվություն՝ օրենքով սահմանված կարգով:
Մուծվել է պետական տուրք՝ 30.0 /երեսուն հազար/ դրամ:
Իմ կողմից վավերացվել է մեկ կտակ, մուծվել է պետական տուրք 5.0 /հինգ հազար/ դրամ:
Սահմանված կարգով բնակչությանը իրազեկվել է ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների, կառուցապատման հետ կապված օրենսդրական փոփոխությունների մասին:
Այդ առումով՝ համայնքի երկու բնակիչներ, վերականգնել են իրենց սեփականության իրավունքը մեր միջնորդությամբ և ստացել վկայականներ:
Հողօգտագործման բնագավառում՝
Իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:
Կատարվել է նաև հողաչափական աշխատանքներ, բնակիչների դիմումների հիման վրա:
Կրթության և մշակույթի բնագավառում իմ կողմից մշտական ուշադրության է արժանանում գյուղի միջնակարգ դպրոցը:Գյուղի դպրոցում իրականացվող միջոցառումները արժանանում է գյուղապետարանի աջակցությանը: Գյուղապետարանի ներկայացուցիչը, որը ընդգրկվել միջնակարգ դպրոց ՊՈԱԿ կոլեգյալ մարմնի խորհրդի կազմում /Ա. Խաչատրյան/ պահպանում է կապը դպրոց գյուղապետարան օղակում:
Երեխաների ակտիվ հանգիստը կազմակերպելու նպատակով, մասնագետի հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր, որը զբաղվում է համայնքի երեխաների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ֆուտբոլ մարզաձևի զարգացմամբ:
Վերջին զանգի միջոցառումների կազմակերպման համար գյուղապետարանը կատարեց, իր համեստ ներդրումը 50.0 /հիսուն հազար/ դրամի չափով:
Համայնքում նշվել է «Տյառն ընդառաջի» տոնը, որի միջոցառումը ուղեկցվել է համայնքում 7 նորաստեղծ ընտանիքներին արժեքավոր նվերների տրամադրմամբ, 105.0 /հարյուր հինգ հազար/ դրամի սահմաններում:
Կազմակերպվել է մարտի 8-ին նվիրված միջոցառում, որի ժամանակ համայնքի կենսաթոշակառու կանանց, մանկավարժներին, բուժ. աշխատողներին, ինչպես նաև գյուղապետարանի կին աշխատակիցներին նվիրվել է նվերներ, 324.0 /երեք հարյուր քսանչորս հազար/ դրամի սահմաններում:
Համայնքում նշվել է մայիսի 28-ի Հանրապետության տոնին նվիրված միջացառումներ, համայնքը մասնակցել է նաև Սարդարապատի միջոցառումներին, 99.3 /ինսուն ինը հազար երեք հարյուր/ դրամ:

Համայնքում իրականացվել է վերանորոգման աշխատանքներ, մասնակի վերանորոգվել է գյուղ մտնող ճանապարհը:Ձեռք է բերվել ասֆալտ, մեր ուժերով իսկ աշխատուժի վրա ծախսվել է 73.0 /յոթանասուն երեք հազար/ դրամ: Աշխատակազմի աշխատանքները բնականոն կազմակերպելու համար, ձեռք ենք բերել՝ տպիչ 45.0 /քառասուն հինգ հազար/ դրամ արժողությամբ:
Գյուղատնտեսության բնագավառում՝ աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպմանը, գյուղացիներին բաժանվել է պարարտանյութ իսկ հետագայում տրվել են համապատասխան տեղեկանքներ, որպեսզի գյուղացին կարողանա անարգել տեղափոխի իր բերքը:
Գյուղապետարանի ամենօրյա հսկողության տակ է գտնվում գյուղի հուշարձանը, որի տարածքը խնամվում և պահպանվում է սեզոնային աշխատակցի կողմից:
Կատարված աշխատանքները այսքանն են: